



1. Ո՛վ բարերար, Փրկիչ Աստուած,
Քեզ կանչեցի խորունկ տեղէն,
Տէ՛ր, աղօթքիս ծայնին լսէ
Եւ աղաղակս մտիկ ըրէ:

2. Եւ Տէր Փրկիչ, թէ որ յիշես
Մեր չարութիւնն ու մեղք սեպես,
Տէ՛ր, ո՛վ կրնայ առջեւդ կենալ
Եւ փրկութիւն Քեզմէ յուսալ:

3. Բայց թողութիւն Քովդ է լեցուն
Պատրաստուած՝ ամէն մարդուն,
Որպէս զի ան Քեզմէ վախնայ,
Ամէն բարիք Քեզմէ յուսայ:

4. Ես միշտ Տէրոջս կը սպասեմ,
Իմ սիրտս Անոր կը նուիրեմ,
Անոր խօսքին միշտ կը յուսամ,
Քանզի Անով կեանք կունենամ:

5. Ամէն մարդ թող Տէրոջ յուսայ,
Զի փրկուիլն Անկէ կուգայ,
Ան զհարայէլն պիտի փրկէ
Ամէն մեղքէ ու տանջանքէ: